

**«Իրավագիտություն» մասնագիտությամբ
Ասպիրանտուրայի ընդունելության ընդհանուր հարցաշար**

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Քրեական օրենքի գործողությունը տարածության մեջ. պետության տարածքի հասկացությունը, նավերի և օդանավերի վրա կատարվող հանցագործությունների համար քրեական պատասխանատվության հարցը
2. Տարածության մեջ քրեական օրենքի գործողության մեխանիզմը ըստ անձանց շրջանակի (քաղաքացիության, ունիվերսալ, ռեալ սկզբունքներ, դիվանագիտական անձեռնմխելիությամբ օժտված անձինք)
3. Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում
4. Քրեական օրենքի հետադարձ ուժը
5. Հանցագործության հասկացությունը, հատկանիշները
6. Հանցագործությունների դասակարգումը
7. Հանցակազմի տարրերն ու հատկանիշները
8. Հանցակազմի տեսակները
9. Տարիքը որպես հանցագործության սուբյեկտի հատկանիշ
10. Մեղսունակություն և անմեղսունակություն, սահմանափակ մեղսունակություն
11. Հանցագործության հատուկ սուբյեկտ
12. Դիտավորությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները
13. Անզգուշությունը որպես մեղքի ձև, դրա տեսակները
14. Մեղքի երկու ձևով կատարվող հանցագործություններ
15. Փաստական սխալը օբյեկտի և ծանրացնող հանգամանքների մեջ
16. Փաստական սխալը միջոցների և պատճառական կապի մեջ
17. Հափշտակության հասկացությունը և հատկանիշները
18. Հափշտակությունների ծանրացնող հանգամանքները
19. Գողությունը և դրա ծանրացնող հանգամանքները
20. Կողոպուտը և դրա ծանրացնող հանգամանքները

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

21. Քաղաքացիական դատավարության փուլերի ընդհանուր բնութագիրը:
22. Կողմերի հասկացությունը և հատկանիշները: Կողմերի դատավարական իրավունքներն ու պարտականությունները:
23. Ոչ պատշաճ կողմի փոխարինումը:
24. Դատական ներկայացուցչության հասկացությունը և տեսակները: Դատական ներկայացուցչի լիազորությունները: Դրանց ձևակերպումը:
25. Դատական ծախսերի տեսակները և դրանց բաշխումը կողմերի միջև:
26. Հայցի տեսակները: Խմբային հայցերի հիմնախնդիրը:
27. Պատասխանողի շահերի պաշտպանության դատավարական միջոցների ընդհանուր բնութագիրը:
28. Իրավունքի պաշտպանության հայցային միջոցները տնօրինելը:

29. Հայցի ապահովում:
30. Գրավոր և իրեղեն ապացույցներ:
31. Վկաների և կողմերի ցուցմունքներ:
32. Հայց հարուցելու կարգը և այն չպահպանելու հետևանքները:
33. Դատական սանկցիաները քաղաքացիական դատավարությունում:
34. Գործի քննության հետաձգումը: Գործի վարույթի կասեցումը:
35. Վերաքննության սահմանները և վերաքննիչ դատարանի լիազորությունները:
36. Վճռաբեկ վարույթի հասկացությունը և խնդիրները: Վճռաբեկ բողոք բերելու իրավունքը և վճռաբեկ վարույթի հարուցումը:
37. Վճռաբեկ դատարանում գործերի քննության դատավարական կարգը: Գործի քննության սահմանները վճռաբեկ դատարանում:
38. Դատական ակտերը վերաքննության և վճռաբեկության կարգով բեկանելու հիմքերը:
39. Բռնագանձումը պարտապանի գույքի վրա տարածելը: Պարտապան-կազմակերպության գույքի վրա բռնագանձում տարածելու առանձնահատկությունները:
40. Պարտապանի աշխատավարձի և այլ եկամուտների վրա բռնագանձում տարածելը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

41. Պետության և իրավունքի տեսության հասկացությունը և հետազոտման առարկայի առանձնահատկությունները
42. Պետության և իրավունքի տեսության որպես գիտության և դասընթացի գործառնությունները
43. Պետության առաջացման տեսությունների բազմազանությունը և դրանց բնութագիրը
44. Պետությունը և պետական իշխանությունը: Պետական իշխանության իրականացման ձևերը և եղանակները
45. Պետության հասկացությունը և հատկանիշները
46. Պետության էությունը և սոցիալական նշանակությունը, դրանց էվոլյուցիան
47. Պետության կառուցակարգը (մեխանիզմը). հասկացությունը և կառուցվածքը
48. Պետական ապարատի կազմակերպման և գործունեության ընդհանուր սկզբունքների բնութագիրը
49. Իրավունքի հասկացությունը օբյեկտիվ և սուբյեկտիվ իմաստներով: Օբյեկտիվ իրավունքի հասկացությունը և հատկանիշները
50. Իրավունքի և օրենքի հարաբերակցությունը: Իրավական օրենք հասկացությունը
51. Իրավահասկացողության իրավաբանական տիպը
52. Իրավահասկացողության լեգիտիմական տիպը
53. Իրավագիտակցություն. հասկացությունը, կառուցվածքը, տեսակները, մակարդակները, գործառնությունները
54. Իրավական մշակույթ (կուլտուրա). հասկացությունը և կառուցվածքը: Իրավական նիհիլիզմ և իրավական իդեալիզմ
55. Իրավական դաստիարակություն. հասկացությունը, նշանակությունը, ձևերը, մեթոդները
56. Իրավունքի նորմի հասկացությունը, կառուցվածքը և կառույցի տարրերի հիմնախնդիրը
57. Իրավունքի նորմեր. տեսակները, դասակարգման նշանակությունը
58. Իրավունքի նորմերի կիրառման հասկացությունը և փուլերը, ներկայացվող պահանջները
59. Իրավաչափ վարգագիծ. հասկացությունը և տեսակները
60. Իրավախախտում. հասկացությունը, հատկանիշները, տեսակները

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

61. Միջազգային իրավունքը՝ որպես ինքնուրույն իրավական համակարգ:
62. Միջազգային և ներպետական իրավական համակարգերի փոխհարաբերակցությունը:
63. Միջազգային իրավունքի նորմերի ստեղծման գործընթացը:
64. Միջազգային իրավունքի աղբյուրները:
65. Միջազգային իրավասուբյեկտությունը:
66. Պետությունը՝ որպես միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտ:
67. Ազգերի և ժողովուրդների ինքնորոշման ու պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքների հարաբերակցությունը:
68. Միջազգային պայմանագրերի մասին ՀՀ օրենսդրությունը
69. Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքների հասկացությունը: Jus cogens նորմի հասկացությունը:
70. Դիվանագիտական արտոնություններ և անձեռնմխելիություններ:
71. Մարդու իրավունքների միջազգային-իրավական պաշտպանությունը:
72. Պետությունների իրավահաջորդությունը:
73. Միջազգային իրավական պատասխանատվությունը:
74. Տարածքը միջազգային իրավունքում:
75. Ֆիզիկական անձանց միջազգային քրեական պատասխանատվությունը:
76. Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման միջոցները:
77. Զինված հակամարտությունների մասնակիցների իրավական վիճակը:
78. Միջազգային կազմակերպությունների իրավաբանական բնույթը:
79. Ճանաչման ինստիտուտը միջազգային իրավունքում:
80. Քաղաքացիության հիմնահարցերը միջազգային իրավունքում:

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

81. Քաղաքացիական իրավունքով կարգավորվող հարաբերությունները:
82. Քաղաքացիական իրավահարաբերությունների կարգավորման մեթոդի առանձնահատկությունները:
83. Իրավաբանական փաստեր: Դրանց դասակարգումը:
84. Քաղաքացիական իրավահարաբերության հասկացությունը, դասակարգումը:
85. Քաղաքացիական իրավունքների պաշտպանությունը: Պաշտպանության եղանակները:
86. Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները:
87. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելը և մեռած հայտարարելը:
88. Իրավաբանական անձի անհատականացման միջոցները:
89. Քաղաքացիական իրավահարաբերություններում Հայաստանի Հանրապետության մասնակցության առանձնահատկությունները:
90. Քաղաքացիական իրավունքի օբյեկտների հասկացությունը և տեսակները:
91. Պատվի, արժանապատվության և գործարար համբավի քաղաքացիաիրավական պաշտպանությունը:
92. Գործարքի հասկացությունը և տեսակները:
93. Հայցային վաղեմության հասկացությունը, նշանակությունը, հայցային վաղեմության ժամկետների տեսակները:
94. Սեփականության իրավունքի բովանդակությունը (սեփականատիրոջ

իրավագործությունները):

95. Պարտավորության սուբյեկտները, անձանց բազմաթվությունը և անձանց փոփոխելիությունը պարտավորությունում:
96. Քաղաքացիաիրավական պարտավորությունների դադարումը:
97. Քաղաքացիաիրավական պայմանագրի հասկացությունը և տեսակները:
98. Պարտավորությունների կատարման ապահովման հասկացությունը և տեսակները:
99. Քաղաքացիաիրավական պատասխանատվության պայմանները:
100. Միակողմանի գործողություններից ծագող պարտավորություններ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

101. Ինքնիշխան պետության իրավաբանական բովանդակության դրսևորման ձևերը:
102. ՀՀ քաղաքական համակարգի էությունը և բաղադրիչները:
103. Ժողովրդաիշխանության անմիջական ձևերի բովանդակությունը և դրանց իրացման կարգը:
104. ՀՀ կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակը:
105. Անձի իրավական կարգավիճակի հասկացությունը և պետության քաղաքականության հիմնական նպատակները տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում:
106. Օտարերկրացիների իրավական վիճակը Հայաստանի Հանրապետությունում:
107. Ընդհանուր ընտրական իրավունքի սկզբունքի հասկացությունը և դրսևորման ձևերը:
108. ՀՀ դատական իշխանության մարմինները, կազմավորման և գործունեության կարգը և սկզբունքները: Դրանց էվոյուցիան՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում:
109. Օրենսդրական գործընթացը Ազգային ժողովում:
110. Ազգային ժողովի պատգամավորական խմբակցությունների և խմբերի կազմավորման և լուծարման առանձնահատկությունները:
111. Պետությունը հասարակության քաղաքական համակարգում:
112. ՀՀ սահմանադրական կարգի հասկացությունը և բովանդակությունը:
113. ՀՀ Կառավարության ծրագիրը:
114. Տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները:
115. «Ընտրական իրավունք» և «ընտրական համակարգ» եզրույթների իրավական նշանակությունը և հարաբերակցությունը:
116. Սահմանադրական դատավարության ընթացակարգն ու դրա առանձնահատկությունները:
117. Տեղական ինքնակառավարման հասկացությունը, տեղական ինքնակառավարման մարմինների հիմնական լիազորությունները:
118. ՀՀ Նախագահի՝ որպես պետության գլխի լիազորություններն արտաքին հարաբերությունների ոլորտում: Դրանց էվոյուցիան՝ խորհրդարանական կառավարման ձևին անցնելու պարագայում:
119. Սեփականության իրավունքի սահմանադրաիրավական հիմքերը:
120. Մարդու իրավունքների դատական և վարչաիրավական պաշտպանությունը:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

121. Քրեական դատավարության էությունը և նշանակությունը:
122. Քրեական դատավարության գործառույթները և դրանց դասակարգումը: Գործառույթների տարանջատումը որպես հիմք դատավարության մրցակցային բնույթի և գործով ճշմարտության հաստատման:
123. Քրեադատավարական ձևը, դրա արժեքայնությունը, դատավարական ձևի միասնականության և տարբերական հիմնահարցերը:
124. Քրեական դատավարության մասնակիցների իրավական վիճակը և նրանց իրավունքների ապահովման երաշխիքները:
125. Քրեական դատավարության սկզբունքները որպես անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովման երաշխիքներ:
126. Ձերբակալման ինստիտուտը քրեադատավարական հարկադրանքի միջոցների համակարգում:
127. Խափանման միջոցները դատավարական հարկադրանքի միջոցների համակարգում, դրանց տեսակները և կիրառման պայմանները:
128. Դատախազի իրավական վիճակը քրեական դատավարությունում:
129. Կասկածյալի և մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի ապահովումը քրեական դատավարությունում:
130. Պաշտպանի իրավական վիճակը քրեական դատավարությունում:
131. Ապացույցների և ապացուցման պրոցեսի հասկացությունը և դրանց բնութագրական հատկանիշները:
132. Քրեական գործի հարուցման փուլի տեղը և դերը քրեական դատավարության փուլերի համակարգում:
133. Նախնական քննության հասկացությունը, ձևերը և կատարման ընդհանուր պայմանները: Անձին որպես մեղադրյալը ներգրավելը և մեղադրանքի առաջադրումը:
134. Քննչական գործողությունների հասկացությունը և համակարգը: Անձի իրավունքների ապահովման երաշխիքները քննչական գործողություններ կատարելիս:
135. Քրեական գործի կարճումը կամ քրեական հետապնդման դադարեցումը որպես նախնական քննության ավարտման ինքնուրույն տեսակ:
136. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության հասկացությունը, նշանակությունը և դատավարական կարգը:
137. Դատական քննությունը քրեական դատավարության փուլերի համակարգում:
138. Վերաքննության հասկացությունը, խնդիրները և նշանակությունը: Վերաքննության ինստիտուտի զարգացման հիմնահարցերը:
139. Վճռաբեկության տեղը և դերը քրեական դատավարության փուլերի համակարգում:
140. Նոր և նոր ի հայտ եկած հանգամանքների հետևանքով գործի նորոգումը, հիմքերը, ժամկետները և կարգը: